ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) գաղափարապես սկիզբ է առնում կովկասահայ ու ռուսահայ լիբերալիզմից, որի գլխավոր խոսափողը «Մշակ» թերթն էր: Եվ պատահական չէ, որ այս կուսակցությունը երբեմն անվանում են մշակական: ՀԺԿ դավանանքը հիմնականում համընկնում ու նույնանում էր «Մշակի» արծարծած ու պաշտպանած գաղափարներին: Նշենք, որ ազատական հոսանքը ռուսահայ իրականության մեջ սկիզբ է առել ավելի վաղ՝ տակավին XIXդ. կեսերից, Ստ.Նազարյանցի «Հյուսիսափայլի» ժամանակներից: Ավելացնենք նաև, որ ազատախոհությունը հայ իրականության հոգեհարազատ հոսանքներից է[1], որից էլ հետագայում սկիզբ առան հայ ռամկավար-ազատական կուսակցությունները:

ՀԺԿ-ն գաղափարական-ծրագրային մեծ նմանություն և ընդհանրություն ուներ 1905թ. հոկտեմբերին հիմնված ռուսական ազատական ամենազորեզ «Ժողովրդական ազատություն» կամ Կոնստիտուցիոն դեմոկրատների (կադետների) կուսակցության հետ: Ուստի պատահական չէ նաև, որ հայ ժողովրդականներին հաճախ անվանել են հայ կադետներ: Այդպես է արվել հատկապես բոլշևիկյան և խորհրդային գրականության մեջ: Խնդիրն այն էր, որ բուրժուական որակվող կուսակցությունը չէր կարելի անվանել «ժողովրդական»:

«Մշակը» և մշակականները դեռ ռուսական առաջին հեղափոխության ժամանակ (1905թ. հոկտեմբերին), ռուսական նորահիմն կադետական կուսակցության օրինակով, կուսակցություն կամ, համենայն դեպս, քաղաքական կազմակերպություն ստեղծելու փորձ կատարեցին[2]: Կազմակերպությունը կոչվեց «Հայ դեմոկրատական կուսակցություն»: Այս առնչությամբ Դ.Անանունը տեղեկացնում է, որ 1905թ. գլուխ բարձրացրեց Հայ սահմանադիր-ռամկավար կուսակցությունը[3]: Այն ռուսական կադետների կուսակցության հայկական մի խմբակցություն կամ մասնաճյուղ էր, որի մեջ ընդգրկվել էին կադետների աշխարհհայացքին հարող հայ գործիչներ Համբարձում Առաքելյանը, բժիշկ Ալեքսանդր Խատիսյանը, Լևոն Ղուլյանը, Մելիք-Ազարյանը, Սամսոն Հարությունյանը, Լևոն Սարգսյանը, Ալեքսանդր Քալանթարը և ուրիշներ: 1905թ. կազմվեց ծրագրի նախագիծ: Կուսակցությունը պիտի հետամուտ լիներ նաև

---

[1] *Հայտնի հեղափոխական, սոցիալ-դեմոկրատ Գևորգ Ղարաջյանը մշակականությունը համարում էր XIX դ. երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական կյանքում տիրող հոսանքներից մեկը (տե՛ս Գ.Ղարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 13):*

[2] *Տե՛ս Буржуазные и мелкобуржуазные партии, М., 1980, с. 147 – 148.*

[3] *Տե՛ս Դ.Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, էջ 351: Մ.Արզումանյանը այս կուսակցության հիմնադրումը թվագրել է 1906-ով, որը ճիշտ չէ (տե՛ս Մ.Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907 – 1917թթ., Ե., 1959, էջ 197):*

հայությանը հուզող ազգային խնդիրներին (Թուրքահայ հարցին) և իր կազմով լիներ ազգային: «Մշակն» այս ուղղությամբ զգալի ջանքեր թափեց, բայց հետագայում ռուսական հետադեմ բյուրոկրատիան կանխեց Կադետական կուսակցության հայկական նմանակ «Հայ դեմոկրատական կուսակցության» կայացման փորձերը: Կուսակցության ստեղծման նախաձեռնողներն իրենց հերթին չհամարձակվեցին հիմնել անլեգալ (ընդհատակյա) կուսակցություն:

Այսպիսով, մինչև 1917թ. ապրիլին Թիֆլիսում կհիմնվեր ՀԺԿ-ն, մշակական ուղղության գործիչները դեռ 1905թ. հոկտեմբերին փորձ են արել հիմնել կադետական ուղղության և ազգային նկարագրով կուսակցություն:

Կարելի է վստահել, որ Հայ ժողովրդական կուսակցությունը 1917թ. Փետրվարյան հեղափոխության ծնունդն էր: Նոր կուսակցության հիմնման նպատակով ստեղծված նախաձեռնող խումբը (Հ.Առաքելյան, Մ.Պապաջանյան, Ս.Հարությունյան, Լ.Ղուլյան. Գ.Մելիք-Ղարագյոզյան և ուրիշներ) ապրիլի 7-ին հրապարակեց հռչակագիր, որը փաստորեն ուներ ծրագրային բովանդակություն[4]: Ծրագրի մշակումը թողնելով ապագա համագումարին՝ այդ հռչակագրում ՀԺԿ-ն ողջունում էր ռուսական մեծ և անարյուն հեղափոխությունը և իր լիակատար համակրանքն ու աջակցությունն էր հայտնում ժամանակավոր կառավարությանը: Ազգային, դասակարգային, կրոնական և տնտեսական խնդիրների լուծումը սրանք ևս թողնում էին Սահմանադիր ժողովի իրավասությանը: Պատերազմի և խաղաղության հարցում ՀԺԿ-ն պաշտպանում էր «պատերազմ մինչև որ չքանա գերմանական միլիտարիզմը»[5], լոզունգը քանի որ գերմանական միլիտարիզմի ջախջախումը խոշոր հարված կլիներ նաև պանթուրքիզմին: Այդպիսով, հայ ժողովուրդը կարող էր ազատություն ձեռք բերել և հուսալ իր Դատի արդարացի լուծումը:

ՀԺԿ հիմնադիր հռչակագրում ասվում էր, որ իր ծրագրային հիմնադրույթներով հարում է ռուսական Կադետների կուսակցության՝ 1917թ. մարտի 25-ին (VII համագումարում) ընդունված վերջին բարեփոխված ծրագրի դաղափարներին՝ իրավական, ժողովրդավարական, պառլամենտական հանրապետություն հիմնելու մասին[6]:

Ազգային հարցում ՀԺԿ-ն դարձյալ պաշտպանում էր ռուսական համապետականության շրջանակներում քաղաքական-տարածքային ինքնավարության և տեղական ինքնակառավարման մասին պահանջը: Ժողովրդականները հատուկ ընդգծում էին Հայկական հարցի կարևորությունը: Ընդ որում, ժողովրդականները Հայկական հարցում դրսևորում էին տարբերակված մոտեցում: Առհասարակ, Հայկական հարցը նրանք դիտում էին որպես միջազգային հարց, որը կարող էր լուծում ստանալ միջազգային կոնդրեսում[7]: Տաճկահայ խնդրում նրանք, ընդառաջ գնալով թուրքահայերի ցանկությանը, պահանջում

---

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հասարակական քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ), ֆ. 4043, գ. 7, գ. 11, թ. 1-2, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 26, Մշակ, 7. IV.1917:

[5] Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 1:

[6] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4043, ց. 7, գ. 6, թ. 1, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 1:

[7] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 2, Ժողովուրդ, 29. IX. 1918, Հ, Գանգրունի, Հայաստան 1918 և հայ քաղաքական միտքը, Պեյրութ, 1984, էջ 228:

էին արևմտահայության ազատագրում թուրքական դարավոր ստրկությունից և ազգային-մշակութային անկախ զարգացում, իսկ արևելահայ նահանգների ու գավառների համար նախատեսում էին տարածքային և ազգային-մշակութային ինքնավարություն՝ տեղական հարցերի վերաբերյալ օրենսդրական մարմնով[8]: Հայկական ինքնավարության իրավասության մեջ մտնելու էին բոլոր վարչական, տնտեսական, մշակութային և դատական գործերը: Նրա սահմաններում գործավարության պաշտոնական լեզուն համարվելու էր հայերենը, հարգվելու էին ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային իրավունքները[9]: Նույն կերպ, ժողովրդականները գտնում էին, որ պետք է պաշտպանվեին արևելահայ գավառներից դուրս՝ Ռուսական կայրության երկրամասերում ապրող հայերի ազգային-մշակութային ինքնավարության իրավունքները[10]:

Կուսակցությունը պահանջում էր վերականգնել հայոց անկախ եկեղեցու բոլոր իրավունքները, պահպանել եկեղեցական կալվածքները, գումարել ազգային-եկեղեցական ժողով՝ հոգևորականներից[11]: Հայոց եկեղեցու կալվածքները, որոնց եկամուտով էին պահվում հայոց հոգևոր և մշակութային հաստատությունները, կազմելու էին համազգային անկապտելի սեփականություն[12]:

ՀԺԿ առաջին ծրագիրը հաստատվեց 1917թ. սեպտեմբերին՝ կուսակցության I համագումարում: Բոլշևիկները, «սպեցիֆիկները» և ուրիշներ, ՀԺԿ-ն որակելով օտարածին, այն նույնացրել են ռուսական կադետների կուսակցության հետ: Իհարկե, երբ հիմնվեց կուսակցությունը և ընդունվեց առաջին ծրագիրը, բավական մեծ ընդհանրություն կար այդ երկու կուսակցությունների միջև, սակայն հետագայում՝ սկսած 1917թ. վերջից ու հատկապես 1918թ., Ռուսաստանում և Անդրկովկասում տեղի ունեցած արմատական փոփոխություններից ու հատկապես Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀԺԿ-ն, ապրելով հետագա քաղաքական բարեշրջում, լիովին կանգնեց ազգային հողի վրա: Այնպես, որ իրավացի չեն նրանք, ովքեր ՀԺԿ-ն նույնացնում են ռուսական կադետների կուսակցությանը: Երկու կուսակցությունների աշխարհայացքի և մարտավարության ակներև նմանության հետ միասին կային նաև ռազմավարական ակնհայտ տարբերություններ: Ռուսական կադետների և հայ ժողովրդականների ամենագլխավոր տարբերակիչ գիծն այն էր, որ ՀԺԿ-ն ուներ ընդգծված ազգային նկարագիր, իսկ կադետները համառուսական մյուս կուսակցությունների պես առանձնապես մեծ կարևորություն չէին տալիս ազգային հարցին: Այսպես, 1917թ. սեպտեմբերին ՀԺԿ I համագումարում խնդիր էր դրվում կուսակցությունը դարձնել անկախ և ազգային[13]: Այդ համագումարում ընդունված կուսակցության առաջին ծրագրում առանձին բաժին էր կազմում ազգային հարցը: Ամրակայելով կուսակցության հիմնադիր հռչակագրի գաղափարները՝ դրանում պաշտպանվում էր Ռուսահայաստանի ազգային-տարածքային ինքնավարությունը տեղական բոլոր հարցերի վերաբերյալ, ուր

---

[8] Տե՛ս ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆ. 4043, ց. 7, գ. 11, թ. 2, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 2. Մշակ, 7. IV. 1912:

[9] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 2:

[10] Տե՛ս Буржуазные и мелкобуржуазные партии, с. 148.

[11] Տե՛ս ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 26:

[12] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 2, Ժողովուրդ, 22. VIII.1918:

[13] Տե՛ս Ժողովուրդ, 29.VIII.1918:

գործավարության պաշտոնական լեզուն համարվելու էր հայերենը[14]: Այս կետը դեմ էր կադետների ծրագրին, որովհետև վերջիններս դեմ էին Ռուսաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-տարածքային ինքնավարությանը և միայն թույլատրելի էին համարում փոքրաթիվ ազգությունների կուլտուր-ազգային ինքնավարությունը: Այստեղ մենք պետք է կարողանանք զանազանել ազգային-տարածքային ինքնավարությունը կուլտուր-ազգային ինքնավարությունից: Վերջինս արտատարածքային պահանջ է: Իսկ ազգային-տարածքային ինքնավարությունն այնպիսի պահանջ է, որը կարող է հիմք դառնալ ազգային ինքնավարության հետագա զարգացման՝ ազգային պետականության ու անկախության գաղափարի հաղթանակին: 1918թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀԺԿ-ն հետևողականորեն պաշտպանեց անկախ պետականության գաղափարը: Այս կուսակցության գաղափարախոսության հիմքում դրված էր հայկական մշակույթի և պետականության պահպանման ու զարգացման իդեալը: Հայկական պետականությունը նրանք համարում էին հայկական մշակույթի ուրույն զարգացման միջոց[15]: 1919թ. սեպտեմբերին Երևանում գումարված երկրորդ համագումարում ՀԺԿ-ն՝ հայ քաղաքական կուսակցություններից առաջիններից մեկը, պաշտպանեց Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու ծրագրային պահանջը[16]:

Հայաստանի պետական կառուցվածքի հարցում ՀԺԿ-ն նախագահական (պրեզիդենտական) ինստիտուտի անհրաժեշտությունն ընդունելով հանդերձ, առաջնությունը տալիս էր ժողովրդական ներկայացուցչությանը՝ խորհրդարանին: Դա երևում է նրանց ծրագրի հետևյալ կետից. «Ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման՝ ինչ անուն էլ որ կրի և ումից էլ որ բխի, չի կարող օրենքի ուժ ստանալ, եթե հիմնված չէ պառլամենտի որոշման վրա»[17]: Ասվածից երևում է, որ ժողովրդականները կողմնակից էին խորհրդարանական կառավարման համակարգին: Նրանք կողմնակից էին ամուր իրավակարգ ունեցող պետության:

ՀԺԿ-ն հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում, ըստ քաղաքական հանգամանքների ու իրադրության, ունեցել է փոփոխական, ավելի ազատ ու շրջահայաց դիրքորոշում: Նրանք միակողմանիորեն չէին ջատագովում ռուսական կողմնորոշումը, թեև իրենք զուտ ռուսահայ կուսակցություն էին: «Եթե հայ ժողովրդի փրկությունը, – կարդում ենք նրանց «Ժողովուրդ» պաշտոնաթերթում, – պահանջե ընդունել մի այնպիսի օրիենտացիա, որը կհակասի նույնիսկ ներկա պայմաններում Ռուսաստանի շահերին, ՀԺ կուսակցությունը դա կանի առանց վարանման»[18]: «Մեզ համար, – կարդում ենք նույն թերթի մեկ այլ խմբագրականում, – այս կամ այն օրիենտացիան միայն միջոց է հայ ժողովրդի իդեալները իրականացնելու գործում, և մի որևէ ուրիշ երկիր կամ ժողովուրդ չի կարող լինել մեզ համար իդեալ»[19]: Ժողովրդականները հանգում էին այն հետևությանը, որ Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մեկ՝ հայկական կողմնորոշում: Ինչպես տեսնում ենք, քաղաքական կողմնորոշման խնդրում ևս հայ ժողովրդականներն այնքան էլ կառչած չէին կադետներին ու Ռուսաստանին:

[14] Տե՛ս նույն տեղում, 29.IX.1918:
[15] Տե՛ս նույն տեղում, 15.IX.1918:
[16] Տե՛ս Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության, Ե., 1919, էջ 3:
[17] Նույն տեղում, էջ 5:
[18] Ժողովուրդ, 29. VIII. 1918:
[19] Նույն տեղում, 15.IX. 1918:

Ժողովրդականներն իրենց դավանանքով և հետապնդած նպատակներով ազգային են հենց թեկուզ նրանով, որ նրանց համար գլխավորը ոչ թե դասակարգային, այլ ազգային, պետական շահն էր: Կուսակցության առաջին ծրագրում որպես հիմնադրույթ, ընդգծվում էր նրա ազգային և ապադասակարգային լինելու հանգամանքը[20]:

Ժողովրդականներին խորթ էին հեղափոխական, սոցիալիստական գաղափարները[21]: Որպես ազատական կուսակցություն՝ ՀԺԿ-ն իր էությամբ ապադասակարգային էր, բայց քանի որ իր տնտեսական պլատֆորմով ընդունում էր քաղաքացու մասնավոր սեփականության իրավունքը, այստեղից էլ ինքնաբերաբար որակվել է որպես բուրժուական կուսակցություն: Իրականում, ՀԺԿ-ն ազգային, հավասարապես բոլոր շերտերի շահերի ու իրավունքների պաշտպանության, ոչ հեղափոխական գործելակերպի, խաղաղ բարեշրջման, ամուր խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր:

ՀԺԿ-ն իր կազմակերպական ձևով նույնպես ազգային էր: Համաձայն կանոնադրության, կուսակցության անդամ կարող էին լինել միայն հայերը[22]: ՀՅԴ-ի պես, սա ևս իր գործունեությունը տարածում էր այնտեղ, ուր կար հայություն: Սոցիալ-դասակարգային առումով ժողովրդականները արտահայտում էին կովկասահայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի շահերը, թեև իրենց համարում էին ապադասակարգային, ազատամիտ, չափավոր կուսակցություն: Քանի որ այն համարվում էր հակասոցիալիստական ուղղվածության կուսակցություն և պաշտպանում էր մասնավոր սեփականության, ընդունակության ու անձնական նախաձեռնության խրախուսման գաղափարները, ուստի սոցիալ-գաղափարական նախադուռ էր բացում իր շարքերում ունևոր իավի մարդկանց ներգրավելու համար: Իսկ այդպիսի խավի հայ մարդկանց ավելի հաճախ կարելի էր հանդիպել Կովկասի արդյունաբերական կենտրոններում[23]: Իհարկե, սա ամենևին էլ չի նշանակում, թե ՀԺԿ շարքերում չկային մտավորականներ, ծառայողներ, գյուղացիներ, արհեստավորներ, հոգևորականներ և սոցիալական ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ: Նորաստեղծ այս կուսակցության շարքերում, ինչ խոսք, այդպիսիք կային, սակայն քանակով փոքր էին:

Տալով ժողովրդական (ռամկավար) և ընդհանրապես «բուրժուական» որակվող ազատական կուսակցությունների ընդհանուր գնահատականը՝ կարելի է եզրակացնել հետևյալը: Որպես ազգային տիպի կուսակցություններ՝ դրանք ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ: Չէին ճանաչում որևէ դասակարգային առանձնաշնորհում: Հանդես էին գալիս ազգային դիմագծի և նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ՝ միաժամանակ հարգելով մյուս ժողովուրդների իրավունքներն ու շահերը: Այս տիպի կուսակցությունների ընկերային աշխարհայացքի առանցքն անհատի բոլոր տեսակի կարողությունների

---

[20] Տե՛ս Հ.Ստեփանյան, Հայ ժողովրդական կուսակցությունը համազգային և ապադասակարգային է, Ալեքսանդրապոլ, 1919, էջ 3:

[21] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4043, ց. 7, գ. 12, թ. 1:

[22] Տե՛ս Ժողովուրդ, 29. IX. 1918:

[23] Տե՛ս Кавказское слово, 11. VI. 1918, ՀՀ ԳԱԱ Լրաբեր, 1988, N 7, էջ 27:

(ֆիզիկական, մտավոր և բարոյական) ազատ դրսևորման մեջ էր: Եվ, վերջապես, նրանք կողմնակից էին քաղաքական, տնտեսական ու ընկերային բարեփոխումների ոչ հեղափոխական՝ բարեշրջման (էվոլյուցիոն) ուղուն:

ИДЕОЛОГИЯ, ПРОГРАММА И ТАКТИКА АРМЯНСКОЙ НАРОДНОЙ ПАРТИИ

А.М.АКОПЯН

Резюме

Армянская народная партия (АНП) является главной либеральной партией восточноармянской и вообще русско-армянской действительности в начале XX в. Ее идейные истоки восходят, с одной стороны, к либеральной газете "Мшак", а с другой-к русской Конституционной демократической партии (кадетов). Поэтому иногда АНП называют также "мшакистами" или армянскими кадетами. Но в отличие от русских кадетов так называемые армянские кадеты имели четкую национальную ориентацию. Они признавали приоритет национальных интересов. В то же время АНП была сторонницей системы парламентарного политического управления Армении и т.д..